

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.- Հայ Եկեղեցույ հինգ գլխաւոր տօներէն մին, որ կը կոչուի նաեւ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ՝ Քրիստոսի պայծառ ու լուսաւոր երեւալէն, եւ Վարդապետ՝ հին հեթանոսական տօնին անունէն: Տօնուած տնօրհնութիւնն է Քրիստոսի փառաւոր ու լուսաւոր կերպարանքով երեւնալը իր առաքեալներէն երեքին՝ Պետրոսի, Յովհաննէսի եւ Յակոբոսի ներկայութեան Գալիլոյ սուրբ լեռան վրայ որ ըստ հաստատուն աւանդութեան Թափոր կոչուած լեռն եղած է: Տնօրհնութիւնը կը պատմեն Մաթէոս, Մարկոս ու Ղուկաս աւետարանիչները, ինչպէս նաեւ Պողոս Առաքեալի Բ. Թուղթին մէջ (1.17-18), թէ եւ լեռան անունը չեն տար:

Տօնը կը կատարուի Զատիկի 14րդ կիրակին, այսինքն Զատիկէն 98 օր ետքը, հետեւաբար 35 օրուան շարժականութիւն կրնայ ունենալ Յունիս 28-էն Օգոստոս 11 Տօնախմբութիւնը երեք օր է. Կիրակի՝ բուն տօնը, երկուշաբթի դարձեալ հրամայեալ տօն ու մեռելոց յիշատակ, երեքշաբթի լուր տէրունի մը:

Յոյները եւ Լատինները Այլակերպութեան տօնը կը կատարեն հաստատապէս Օգոստոս 6-ին: Այս տօնը սկսած է հաւանաբար Թարգմանչաց դարէն, եւ առաջին օրուան շարականը Քերթողահայր Մովսէս Խորենացույն կը վերագրուի, իսկ մեծ աղօթքն ալ՝ Եղիշէի: Բ. ու Գ. տօները Շնորհալիին ժամանակ՝ աւելցած են որ նոյն օրերուն շարականն ալ գրած է:

Տէրունական կեանքէն առնուած Հրաշատետիլ դրուագը՝ հետեւեալն է.

- Շուրջ երեք տարի քարոզչութենէն ետք, այն շրջանին երբ Յիսուս այլեւս ժամանակը եկած կը նկատէր Երուսաղէմ երթալու, կը սկսի իր աշակերտները պատրաստել եւ կանխատեսութիւններ ընել ի մօտոյ իրեն սպասող տաժանգին շարշարաքներով ասդեմական իր կեանքի վախճանի մասին:

Յիսուս նման զրոյցներով կ'ուզէր քննարկել, թէ իրեն սպասող նման կեանքին ու վախճանին անդրադարձը ի՞նչ պիտի ըլլար աշակերտներուն վրայ, որպէսզի նաեւ զանոնք կողմնորոշէր դէպքերը եւ գալիք իրադարձութիւնները ճիշդ ըմբռնելու:

Այդպիսի զրոյցներու ընթացքին է ահա Փիլիպեան Կեսարիոյ կողմերը, երբ աշակերտները վրդովուած վարդապետին կանխատեսութիւններէն, իրարանցումի մէջ, Պետրոս ըսաւ. «Քաւ լիցի Տէր, այդ բանը քեզի չի պատահիր»... (Մատթ. 16.22): Յիսուս ծանրօրէն կը յանդիմանէ Պետրոսը. «Ետիս գնա, սատանայ...»: (Մատթ. 16.23):

Այս զրոյցէն եւ յիշեալ «կոչ»էն շուրջ մէկ շաբաթ ետք, Յիսուս իր հետ առնելով Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը, լեռ ելաւ աղօթելու: Եւ մինչ կ'աղօթէր, անոր դէմքը այլակերպեցաւ եւ հագուստը փայլուն սպիտակ գոյն առաւ: Եւ ահա երկու հոգիներ՝ Մովսէսն ու Եղիան երեւցան իրենց փառքով, կը խօսէին Յիսուսի հետ՝ իր մահուան մասին, որ պիտի պատահէր Երուսաղէմի մէջ: Պետրոսի եւ իր ընկերացողներուն աչքերը քունով ծանրացած էին, բայց սթափեցան եւ տեսան Յիսուսի փառքը եւ երկու մարդիկը, որոնք անոր հետ էին: Երբ Մովսէս ու Եղիա կը մեկնէին, Պետրոս ըսաւ Յիսուսի. - Վարդապետ, լաւ է որ հոս մնանք. երեք վրաններ շինենք՝ մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար: Սակայն չէր գիտեր թէ ի՞նչ կ'ըսէր: Տակաւին Պետրոս կը խօսէր, երբ ամպ մը եկաւ եւ շուքի տակ առաւ զանոնք: Աշակերտները վախցան, երբ ամպը ծած կեց զիրենք: Ամպին մէջէն լսուեցաւ ձայն մը, որ կ'ըսէր. ԱՅՍ Է ԻՄ ԸՆՏՐԵԱԼ ՈՐԴԻՍ, ԱՆՈՐ ՄՏԻԿ ԸՐԷՔ: Մինչ այս ձայնը կը լսուէր, Յիսուս առանձին էր: Աշակերտները այդ օրերուն լուր մնացին եւ ռեւէ մէկուն չպատմեցին իրենց տեսածներուն մասին: (Ղուկաս 9:28-36):